

և Հայրապետական դահլից հրաժարուելու մասին: 1824 թ. հոկտ. 24. (պատճեն):

Ի. Ներսէս արքեպիսկոպոսի ինքնագիր նամակը Յարութիւն վարդապետին Բիշնէից 1828 թ. դեկտ. 29-ին:

Բ. Աղուանից իւրայեւ կաթուղիկոսի կոնդակը Մելիք Աղամին (չունի թուական), որով իւր երախտապարտութիւնն է յայտնում Մեկիքին: Եւ օգնել է իւրայեւին կաթուղիկոսական Աթոռը ժառանգել:

Թ. Հիմ անապատի միաբանութեան կողմից աղերս առ ընդհանրական կաթուղիկոսն Ամենայն Հայոց (անունը թիւը անյայտ), որով խնդրում են պատրիարքի օժանդակութիւնը վանքը պարտքից ազատելու համար:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

Դ Ե Ր Ս Ի Մ .

(Ետընապատիւն եւ վերջ.)

Ան և Դիվրիկ Դերսիմի մօտ լինելուն փոքր ակնարկ մի ևս այս տեղի ժողովրդեան վերայ կը ձգեմ յենկով ինչ ինչ զրոյցներու:

Անայ հայ ժողովուրդն ի վաղուց սովորած է պանդխտութիւնն. շնորհիւ քանի մի աղաներու: Պօլսոյ մէջ մեծ տեղ բռնած էին. Ալեքսանդրոս մէջ կը տեսնուի վերին աստիճանի շահամուծիւն. սակայն սորա փոխարէն չտեսնուիր ժլատութիւն. պատուաբեր ծախքերու համար նա առատաձեռն է: Հացկերոյթներու, զուարճալի հանգէսներու կը մասնակցի. Շահամուծեամբ ակնցին շատ տեղ կը համեմատեն Բաղիշեցոյն. սակայն Անցին աւելի պարզ է և միամիտ քան Բաղիշեցին: Արդէն ժողովրդեան հնարած զրոյցներն (անեկզոտ) դարերու ընթացքի մէջ սրբազրուած փաստեր են ժողովրդեան յատկութեան, առ այս մի քանի զրոյց առաջ կը բերեմ Դիվրիկցին կասէ—Անցին քիչ մօից շատ տեսակ կերակուրներ շինել գիտէ: անցուն մէկը $\frac{1}{2}$ օխայ միս կառնէ: տուն կը տանէ. կատուն այդ միսն կը փախցնէ: Անցին երեք օր միւր զանելու համար կա-

տուն կը փնտռէ և վերջապէս կատուն կը գտնէ: միւսը ոչ. կատուն կը կռնէ իմանալու համար թէ կատուն միւր կերած է թէ ոչ: կը տեսնէ որ կատուն $\frac{1}{2}$ օխայ միս չափ կը կռնէ: զարմանալով կասէ ինքն իրեն—բսնք՝ ահա միկը: ապա ուր է միսը: Եւ բսնք՝ ահա փսիկը: ապա ուր մէ միկը:

Անայ կանայք հակառակ իրենց արանց երկար տարիներու պանդխտութեան բարոյականի կողմից շատ լաւ են: անբարոյական եղածն իրենց միջից կարտաքսեն: շատ անգամ կը յղեն իւր մարդուն: մարդն ևս իւր հօր: Անցի կանայք զարգարանք շատ կը սիրեն: որոց ճակատն և կուրծքն ոսկիով լիքն է: միայն ճակատի շարանը 101 ոսկի պիտի լինի: ունի նա թանգազին մատանիք: ապարանջան: գնտեր: ևլն. ևլն.:

Անցին իւր հայրենիքը շատ կը սիրէ: դուրսն զրամ կը շահի: ներսն կուտէ: զուարճութիւնը իւրեն առաջին զբաղումն է: ուսումնարանի վերան այնչափ սէր չունի: Յաճախապատում կարգացողն իրենց մէջ մեծ նշանակութիւն ունի: որպէս այլ տեղ նարեկ և Սաղմոս կարգացողն:

Դիվրիկցին ևս շահամուծ և մի անգամ ճարպիկ ժողովուրդ մի է: յամառ և պնդերես: Ի Տրապիզոն յամառ և պնդերես մուրացկանի Դիվրիկ տիկէնչիօսի (մուրացկան) կասեն: սակայն Դիվրիկցիք այդ առածն այլ կերպ կը բացատրեն: իբր նրանց մէջ աղջիկ չը կայ: այլ վայրերէ աղջիկ կը մուգան իւրեանց հարս կը բերեն:

Անցոց մէջ աղջիկ շատ կայ: սակայն Դիվրիկցուն չտար: վասն զի Անցին սովորութիւն ունի փեսան իւր մօտ պահել: Դիվրիկցին ևս սովորութիւն ունի անպատճառ իւր հայրենիք վերադառնալ: բայց գիտէ Դիվրիկցին Անցուն խարել: մնալու խոստումով աղջիկը առնել: մի հնարով վերադառնալ իւր հայրենիք:

Մի Դիվրիկցի Անցու աղջիկն կը տանէ իւր հայրենիք հօր տեսութեան վերադառնալու պայմանաւ: չգառար: զոքանչը քանիցս նամակներ կը գրէ: կը հասկանայ որ այլ և չպիտի գայ: կը գրէ.— «Ամառ կուգայ խարճուխ (ծախս) չունիս: ձմեռ կուգայ պաշլուխ (զլխարկ) չունիս: անաստուած: մեր աղջիկը խափեցիր տարիր: ալ մեղի գալու միտք չունիս»:

Դիվրիկցի թուրքերն մեծ մասամբ մուրացկաններ են: որք գրեթէ փոքր Ասիայի ամեն կողմերն շրջելով մուրացկանութեամբ կը պարապեն: հայք արհեստաւորներ են: նոքա ևս շրջուն կեանք ունին: զլխաւորաբար կլայեկագործ են: սոքա փոքր Ասիայի ժողովրդեան յատկութիւնը հետեւեալ կերպով կը նկարագրեն.—Թուգուլ թուգուլ

կը գործէ Լալէպցին, սրխձի է Մարաշցին, հալվա-
ձի Ընթապցին, բամբակ գողդ Ագանացին, պաստե-
ղաբորձ Մալաթիացին, սաստանորդի Լաճինցին,
խարդախ Կեսարացին, սուր սուր Զիլեցին, տափուկ
տափուկ Ամասիացին, մարդաց ցահան կանէ Սերաս-
տացին, կնոջից վրէժ կը լուծէ Թոխաթցին (Եւ-
դոկիա), ագացի հարկանող Սամսոնցին, ֆնդխձի
Թրապիզոնցին, ֆասուլխաձի Կեսսոնացին ևլն:

Դիվրիկցի կայսերագործ և առևտրական հայե-
րն ունեն իրենց երկդիմի խոսակցութիւնը:

«Աղա, ծղին լաւ վարձէ՛», — ընկերօքը կը հաս-
կացնէ՝ շատ կեր:

«Ազկալին նստածն շուն խեղդող է բերեր», —
գործը լաւ մի կատարեր:

«Աթման կով է», — սակարկելու միջոցին պինդ
կանգնէ:

«Հասան աղան թանիշուն է, պէտք է ուճուղ
վերմիշ (արժան) ընենք, մինչև տակը քամէ»,
Թուրքին հասկացնել կուզէ թէ ծանօթ է ար-
ժան տալու է, ընկերօջն նաև թէ որպէս թա-
նիշուն արժողութիւն չունի, դրամը քամելու է:

«Կարճ կապէ, դերձանը կը ձերմըկի», — լուռ
կաց, հայերէն գիտէ, սուտդ կը յայտնուի:
«Մէմիշ աղան ձենձոտ հեծման է», — առատա-
ձեռն է, արժան չշինիս:

«Հասան աղան ջորու հար է», — իշուպէս յի-
մար է:

«Սատանայ քօր օլսուն (լինի)», — իբր թուրքի
կարծելով թէ ծախողն կուրանայ, բայց իւր
ասածովն սատան կուրանայ:

«Հուն քեօփէկտէն ալ չար օլսուն», — յաճախոր-
դին հասկացնել կուզէ թէ սուտ ասողն շնից
ցած լինի, մինչդեռ իւր առածն է շունը շը-
նից ցած լինի, ևլն:

Դիվրիկցի կանանց պանդխտութեան վերայ
երգած երգերից մէկն այս տեղ կը ներկայացնեմ:
որոյ մի մասն թուրքերէն էր, զայն ևս վերածնցի
հայերէնի և բուն հայերէնն չակերտներով նշանա-
կեցի:

Յառաւօտեան արեգակն կը փայլէր,
Սիրելիս իւր ձիու թարքին կը կապէր,
Թղթատար վարձել մտածեց — չգնար, ասաց,
Դէմքը տխուր էր ունէր մեծ ցաւ ու լաց,
Հուտ արի տէրս, շուտ մի լինիր ապերախտ,
Պանդխտութիւն սահմանողն չտեսնէ դրախտ:

Մի ջուր տուր, տէրս, ոսկի թասով,
2է՛ ես քեզ սիրեցի իմ բոլոր սրտով,
Զմեզ բաժանողներ Աստուծով:

Օրեր ու ժամերնին անցնեն սև սգով:

Թաշուն մի թառեցաւ թեւաւորի վերան,
Խղճաւ տէրս, արտասուացս հեղեղանման,
Եթէ վերադարձիդ զիս կենդանի չդտար,
Դրէ շիրմիս — այս տեղ է թաղուեր մի ցաւագար:

Կանաչ գորտեր լճերու մէջ թող գագռան,
Ես թեւ առած էի, աւաղ թեւերս կոտորեցան,
Մնացի բացը, անտէր ու անտիրական,
Ենապատի մէջ ընկած մի թափառական,
Զմեզ բաժանողներ Աստուծով

Օրեր, ժամերնին անցնեն սև սգով:

Մարրի մէջ տեսնուած է հասակը,
Լահորի շալը վայելուչ սեղմած է մէջքդ,
Երարեքէն կը խօսես, չեմ հասկնար խօսքդ,
Ո՛հ, շատ շուտ անհասկանալի դարձար, տէրս:

«Գիշեր ցերեկ հեշ չես էլլեր մտացս,
Գլուխս բարձ դնեմ, կուգաս էրածս,
Հարամ էրիր կերած հացս ու խմածս,
Եշխրքիս չեմ փոխեր, սրտէ սիրածս»:

«Առաւօտաց կանուխ պաղ պաղ հովերը,
Պիւլպիւլ շատ դարկեր վարդիս քովերը,
Զմնայ դիւշմանին, կոտուի թեւերը,
Զարկին, կրակ տուին, կայրիմ կը վառիմ,
Զուրի պէս հալուեր եմ ձանրադ կը նայիմ»,
«Ճամբորթ կուգայ հինգ զուժաշի բեռներ կայ,
Մէջ տեղերններս շատ ծովեր ու լեռներ կայ,
Աս աշխրբիս մէջ մեզ ալ մեռնել կայ»:

Դու եկուր աղաս, դու եկուր,
Երմաղանդ չեմ ուղեր, արեգ առ եկուր»:

«Պիւլպիւլը կը կանչէ պաղէպանի պէս,
Ենչափ կարօտեցեր եմ հայվա նառի պէս,
Մէկ ալ չկայ, խապար բերէ զարիպէս,
Եկուր, աղաս, եկուր, սիրտ մի հատցներ,
Զիս շատ են լացուցեր, դու մի լացուներ»,
Եկնէն անցնողն Մուրատ գետն է,
Տիրոջս հեծածը սև զաւթն է,
Սրտէ սիրածիս հասնելու փափաքը,
Կը գագռէ իմ սրտի մեծ կրակը,
Հուտ արի տէրս, արի և դարձիր,
Թափած արտասուքներդ սրբիր և դարձիր:

Մի ծառ տնկեցի, պտուղն հասաւ,
Մի մի համբեցի, եօթ տարի եղաւ,
Երի, տէր, վարդ տէրս, արի մի անգամ խնդաւ,
Շէմքիդ ներքև հառաջանքներս տես և գնաւ,
Դարձեալ արեգակն ծագեց, կարմիր հագան
լեռներ,
Կանաչ մետաքսով զարդարեցան այգիներ,
Տիրոջս հետ կը շրջագայէի այս սար ու հովիտ-
ներ,
Փշեց անգութ քամին, բաժանեց երկու սիրե-
լիներ:

Սիրելոյս գտնուած վայրն գարուն կայ,
Մի նամակ գրեմ. արդեօք կուգայ,
Ախ, առնէի իւր նամակը, քսէի երեսիս,
Աշխարհքիս ապրանքը չեկար աչքիս,
Ան սև յունքեր, ոսկեփայլ հիւսուած ես,
Տանեմ քեզ, պանդխտութիւն, ինչ կը գայ
ձեռքէս,
Այլոց նախափնէրը, Աստուծոյ դառն հայեացքը
Երկուքն ևս հրգեհնեցին իմ հոգւոյս բուրակը:

Մ. Հայկունի.



ՄԱՆՐԱՆԻ ԴՆԱԳՈՐԻ

— Մ. Աւետարանի նա գոյն ձեռագրի կորած
թերթերը գտնուել են: Յունարէն Աւետարանի ձեռագիրներից
նազոյնն եւ նշանաւորն է Զ. դարուց Պատմոսի ձեռագիր
կոչուածը: Այս աւետարանը գրուած է ծիրանագոյն
մագաղաթի վրայ եւ ծաղկած է արծաթագոյն եւ ոսկեգոյն:
Պատմոսի ձեռագրից ցարդ գտնուած էին 45 թերթ, որոնք
55 պահուում էին Պատմոսում, 6 թերթ վատրկանում,
4 քրիստոնական մուսուլման եւ 2 — վիճնայում: Թէպէտ
է թիւնդորֆի անունով յայտնի աւետարանի ձեռագիրը
սրանցից հին է, քայք սա նշանաւոր է իւր արտաքին գեղարուեստական
ձեռք: Ձեռագրիս պակաս թերթերը գտնուել են այժմ Տաճկաստանում,
Կեսարիոյ շրջակայք մի փոքրիկ գիւղական եկեղեցում,
համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այդ թերթերը թէ մագաղաթով,
թէ գրութեամբ եւ թէ քնագրով լրացնում են յայտնի Պատմոսի
թերթը: Այս գիտի լուրը տարածուելուն պէս բազմաթիւ գնորդներ
չոյս ընկան, գնատուրարք անգլիացիք եւ ամերիկացիք,
քայք վեճ է վերջոյ այդ թանգարանի նշխարը գնեց ռուսաց
կառավարութիւնը 25,000 ֆրանկով:

— Եգիպտական արձանագրութիւններին
մէկը լոյս է սփռում. Իսրայէլացւոց եւ քի վրայ
Եգիպտոսից: Ինչպէս արժեքնոր Պետրին հաղորդում
է աղբիւրական, „Contemp. Review“ մայիսի տետրում գտնուել
է այն փարաւոնի մի արձանագրութիւնը, որի ժամանակ
Իսրայէլացիք զուրս եկան Եգիպտոսից: Արձանագրութեան
հիման վրայ կարելի է եզրակացնել, որ Իսրայէլացւոց
մի մասը ղեռ Բանանումն էր ապրում: մինչ միւս
մասը գերութեան մէջ էր Եգիպտոսում: Հետազոտողի կարծիքով
Իսրայէլացւոց եւ քի կատարուել է 1200 թ. Բրիտոսից
առաջ, Մերիմպուտի փարաւոնի ժամանակ:

— Որոգիւնէսի բազմալեզուեան աստուածաշնչի
մի կտորը գտնուել է այս օրերս: Որոգիւնէսի բազմալեզուեան
աստուածաշնչը կոչուում էր Կեքալայ վեցիւնան, որովհետեւ
քնագիրն վեց (երեսն իսկ ութ) էջերի վրայ դէմ առ դէմ էին
դրուած աստուածաշնչի քնագիրն ու թարգմանութիւնները:
Այս երկասիրութեան կարծես զգացուեց այն ժամանակ, երբ
քրիստոնեայ յոյները վիճարանութեան քունելով հրէաների
հետ միշտ լսում էին, որ աստուածաշնչի քնագրում այս
ինչ կտորն այլ կերպ է, քան իւր եօթանասնից թարգմանութեան
մէջ:

Վեցիւնան աստուածաշնչի առաջին էջը քունում էր
երրայերէն քնագիրն երրայական տառերով, ապա նոյնը
յունարէն տառերով, երրորդում դրուած էր մի ըստացի
թարգմանութիւն, որ Հաղիմանոս կայսեր ժամանակ մի հեղինակ
Արքիւս անունով պատրաստել էր, չորրորդ էջում դրուած էր
Սիւմեթա Սամարացու թարգմանութիւնը, հինգերորդում
Թէոփոսի թարգմանութիւնը: Բանաստեղծական հատուածների
համար գործ էին դրուում եւ այլ յայտնի թարգմանութիւններ,
որով աստուածաշնչի այդ մասերը ութիւնան էին դառնում:
Այս ծանր եւ մեծագնի գործի ծախքներն հոգում էր մի
ծերակուտի անդամ Ամբրոսիոս անունով, ուստի եւ Որոգիւնէսը
վարձել էր 7 արագագիրներ եւ 7 գեղագիր աղիւնք:
Մինչեւ այժմ այս աստուածաշնչից ոչ մի հատուած
չը կար, միայն վերջերս լսուեցաւ, որ Միլանում մի
կաթոլիկ կրօնաւոր Զիովանի Մերկատի անունով գտել է
մի կրկնագիր յունական ձեռագրի մէջ վեցիւնան
թերթերը: Հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ այս
գտնուած հատուածն ամիսփում է 11 ստղմոս, միայն թէ
առաջին էջը երրայերէն տառերով (երրայերէն քնագիրը)
չը կայ, երկրորդում կայ յունարէն տառադարձուած երրայերէնը,
երրորդում Սիւմեթայի թարգմանութիւնը, հակառակ
բարդ յայտնի կարգին, ապա Արքիւսի թարգմանութիւնը,
յետոյ եօթանասնիցը, Թէոփոսիին եւ տարբեր ընկերացւածք:

— Սիրաքի գիրքի երրայերէն քնագիրն, որ 2000 տարի
ի վեր կորած էր համարուում մասամբ գտնուել է գտնուել է
Միլայի վրայ ապրակաւ աւետարանի ձեռագրի գտիչ
անգլիացի օր. Լեռնիս: Անգլերէն „Academy“ ամսագրի
մէջ հրատարակուած տեղեկութիւնից երևում է, որ այս
հատուածը առաջին շարայարեալ քնագիրն է Սիրաքի, որ
ցարդ անյայտ էր:

* *

— Հունագրիոյ հազարամեակը լրացաւ այս տարի
մայիսի 2-ին, այս առթիւ Հունգարիան մի համազգային
տոնախմբութիւն կազմեց, որ այժմ ամբողջ Եւրոպայի
ուշադրութիւնն է գրաւում: Հազարամեակի առթիւ
կազմուած ցուցանալէսը պիտի տեսնուի կէս տարի, սերուն
պիտի մասնակցել ամբողջ երկրին: Հազարամեակի տոնախմբութիւնը
յաւերժացրել են բանալով Բուդա-Պեշտում ազգային
ժողովի նոր շէնքն եւ հիմնելով Հունգարիայում 500
ժողովրդական դպրոց, սրանց պիտի աւելանայ եւ քաղմաթիւ
պատմական յուշարձանների քանոն: Հազարամեակի
ցուցանալէսի մի բաժինը ներկայացնում է Հունգարիոյ
աստիճանաշար զարգացումն տասն դարերի ընթացքում,
միւս բաժինը այժման վիճակի երկրագործութեան, արդիւնաբերութեան
եւ գիւղատնտեսութեան: Միակ սեւ բիծն այս փառաւոր
տոնախմբութեան այն է, որ Հունգարիոյ մէջ քերուած
այլազգիք, սլաւոններն ու գերմանացիք չեն դադարում
միմեանց յետեւից բողոքել իրենց դէմ գործ դրուած
մշտնադրի համար:

— Զուլեցեքացի յայտնի մեծ քուժիչ Եւատտէր
անունով սուտ Բրիտոսի մասին մի ժամանակ մեծ
աղմուկ հանեցին (մերիկայում, այժմ Լոնդոն քաղաքի
լրագիրն յայտնում է, որ Եւատտէրն, յայտնի կ'օմէ
դէպի ինչ մէկն է, որ օգտուելով իւր արտաքին կերպարանքից
նա նման է Բրիտոսի աւանդական այն պատկերին,
որպէս նկարչները սովորաբար պատկերացնում են